մարդորդների և հաշտարար քաղաքականութիւն վարողների դէմ։

3) Ժողովվածները պարտաւորվում են պաշտպանել այն կազմակերպութիւնները, որոնք ձգտում են ծանօթացնել ժողովրդի լայն խաւերին զինված կուի նպատակների հետ, որ սպասվում է Լեհաստանում յեղափոխական ժողովրդական շարժման դէպքում, ուղղված առաջին հերթին ռուսաց պետութեան դէմ։

Լեհերի հանդէս գալը ներկայումս արգասիք է Բալկանեան թերակղզում տիրող աննօրմալ կացութեան։ Պատերազմը համարվում է անխուսափելի։ Պատերազմին մասնակցելու են և Աւստրիան, և Ռուսաստանը, որոնց ոյժերը, ինչպէս յոյս ունեն լեհերը, մի փոքր կը թուլանան։ Իսկ դա հնարաւորութիւն կը տայ լեհերին կուի դուրս գալ յանուն անկախութեան։

Դէպի լեհական շարժումները հանելուկային վերաբերմունք ցոյց է տալիս աւստրիական կառավարութիւնը։ Լեհական անկախութեան համար հարկ է հանդէս գալ նաև ընդդէմ Աւստրիայի։ Սակայն աւստրիական կառավարութիւնը արգելք չէ լինում լեհական համագումարների բանաձևերը տպելուն, մինչդեռ Գալիցիայում ռուսական լրագիրների մէջ գրաւվում են ամենապարզ բովանդակութեան յօդուածները։ Լուրերի համաձայն, լեհերի և աւստրիական կառավարութեան միջև գոյութիւն ունի գաղտնի համաձայնութիւն։ («Кав.»)

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Ինչպէս գիտենք, Ամենայն Հայոց Կաթողիկոսը շրջաբերական կօնդակով յայտնել է Ռուսաստանի, Թիւրքիայի, Պարսկաստանի, Ամերիկայի և այլ տեղերի առաջնորդներին և ազգային եկեղեցական հաստատութիւններին, որ առաջիկայ հոկտ. 13-ին Էջմիածնում տօնվելու է հայ տպագրութեան 400-ամեակի և հայ գրերի գիւտի 1500-ամեակի միացեալ յօբելեանը, և հրաւիրել է այդ հաստատութիւնները մասնակցել այդ մեծ ազգային տօնին։

Կ. Պոլսի հայոց պատրիարքը ստանալով նոյնպէս այդ կօնդակը՝ յանձնել է Ուսումնական Խորհրդին՝ հարկաւոր կարգադրութիւնն անել։ Պէտք է ասել, որ մինչև այդ Կ. Պոլսում կազմված ոմն Լևոն Լորենցի նախագահութեամբ մասնաւոր յանձնախումբը լուծվել է, ի նկատի ունենալով որ ոչ ոք չէ ցանկացել մասնակցել մի յանձնախմբի, որի նախագահը՝ ոճրագործութեան մէջ ամբաստանված մի անձն է։ Վերջապէս այդ յանձնախումբը, իբրև բոլորովին մասնաւոր, ոչ մի նշանակութիւն ունենալ չէր կարող։ Կաթողիկոսի կօնդակը ստացվելուց յետոյ Ուսումնական Խորհուրդը յանուն ազգային կենտրօնական վարչութեան որոշում է մասնակցել հոկտ. 13-ի տօնին և ընտրում է պատգամաւորներ՝ պ. պ. Ստեփան Մալխասեանին և բանաստեղծ Յ. Յովհաննիսեանին։ Իսկ Միացեալ Ընկերութիւնը, որ Թիւրքահայոց կարևորագոյն կրթական-լուսաւորական հաստատութիւնն է, յանձնել է Թիֆլիսի մնայուն մասնաժողովին՝ յանուն Միացեալի մասնակցել տօնին, Բացի դրանից Կ. Պոլսում կազմվել է մի մեծ յանձնաժողով, բաղկացած զանազան գրականագէտներից, որ պէտք է մշակէ ծրագիր, թէ ինչպէս տօնել Կ. Պոլսում հոկտ. 13-ը։ Այդ յանձնաժողովին մասնակցում են նաև հայ-կաթօլիկ և հայ-բողոքական գրականագէտներ։

Թէ ինչպէս պէտք է մասնակցեն մեր դպրոցական հաստատութիւնները հոկտեմբ. 13-ի տօնին, դեռ յայտնի չէ։ Իբրև սխեմա կարող է ծառայել այն ծրագիրը, որ կազմել է Յովնանեան դպրոցի կողմից ընտրված մասնաժողովը։ Մասնաժողովը որոշել է առաջարկել հոգաբարձական խորհրդին հետևեալ ծրագիրը. 1) Հոկտ. 13-ին մասնակցել հոգաբարձական, ուսուցչական և աշակերտական կազմով ընդհանուր հոգեհանգստին, Վանքի եկեղեցում, եթէ այդպիսին տեղի ունենայ. հակառակ դէպքում, կատարել հոգեհանգիստ Յովնանեան դպրոցում. 2) երեկոյեան կազմակերպել դպրոցում գրական-երաժշտական երեկոյթ. գրական մասը բաղկացած կը լինի դասախօսութիւններից տպագրութեան և գրերի գիւտի մասին. 3) ուղարկել պատգամաւորութիւն դպրոցի կողմից Էջմիածին և 4) որոշ գումար յատկացնել յօգուտ համազգային դպրոցական ֆօնդի։

Երևի միւս դպրոցներն ևս կը ղեկավարվեն այս սխեմայով։

Այս բոլորից յետոյ զարմանալի է, որ «Հօրիզօնը» դարձեալ շարունակում է, այս անգամ ևս ոմն Շարքարունիի բերանով, ասել, թէ Թիֆլիսը, Բագուն, Պոլիսը ոչ մի նշանակութիւն չը տալով Էջմիածնի կարգադրութիւններին՝ կը տօնեն յօբելեանը նոյեմբերի 26-ին։

Վերին աստիճանի յանդգնութիւն է մի քանի թայֆայականների անելիքով պարծենալ և խօսել Թիֆլիսի, Պոլսի, Բագուի մասին, երբ և Թիֆլիսը, և Պոլիսը և Բագուն տօնելու են հոկտեմբերի 13-ին։

Սեպտ. 1-ին Բագւում կայացած ժողովը որոշել է, ինչպէս հաղորդում է «Баку» լրագիրը, արձագանք տալ Էջմիածնի հրաւէրին։

Ամօթաբերը թայֆայականների վարմունքն է, որոնք իրանց նեղ կուսակցական միտումների, իրանց ամեն փառասիրութեան համար ոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում վիժեցնել հոկտ. 13-ի տօնը։

Հ. Ա.

## ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՆՈՐ ՇԷՆՔԻ ԲԱՑՈՒՄԸ

—

Այս տարի Ներսիսեան դպրոցը տեղափոխվեց իր նոր շէնքը, որի հանդիսաւոր օծումը անորոշ ժամանակով յետաձգված է, որովհետև կառուցման աշխատանքները դեռ ևս շարունակվում են։

Սեպտ. 1-ին ուսուցչական կազմի և աշակերտութեան ներկայութեամբ տեղի ունեցաւ հանդիսաւոր հոգեհանգիստ դպրոցի հիմնադիր Ներսէս Ե. կաթողիկոսի և հանգուցեալ բարերարների համար, ապա կատարվեց դպրոցական մաղթանք, որից յետոյ տեսուչ Յ. Խունունց մի քանի խօս-